Հաստատված է Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2010թ. նոյեմբերի 19-ի նիստում

Ռեկտորի պաշտոնակատար՝ Ռ.Կ. Միրզախանյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը, ՀՊՄՀ-ի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները:

1.2. Սույն կանոնակարգը կարգավորում է ՀՊՄՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի վճարովի և անվճար համակարգերի լավագույն՝ 5 կիսամյակների անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին խրախուսելու գործընթացը:

1.3. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատելու օրվանից և ուժը կորցրած է ճանաչվում համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

2. Ուսանողական անվանական կրթաթոշակի հատկացում

2.1. Անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի 5 կիսամյակներում անընդմեջ գերազանց առաջադիմություն, գիտական և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:

2.2. Մագիստրատուրայում անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի 5 - 8 և մագիստրատուրայի 1-ին կիսամյակներում գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

2.3. Անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները ֆակուլտետների խորհուրդների որոշմամբ ներկայացվում են ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի քննարկմանը:

2.4. ՀՊՄՀ գիտխորհուրդը բաց քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ որոշում է անվանական կրթաթոշակ ստացողների ցանկը, որը վավերացվում է համալսարանի ռեկտորի հրամանով:

2.5. Ուսանողն առաջադիմության, կարգապահության և այլ պատճառներով ռեկտորի հրամանով կարող է զրկվել անվանական կրթաթոշակից:

3. Անվանական կրթաթոշակի չափը

3.1. ՀՊՄՀ-ում սահմանվում են հետևյալ ամսական անվանական կրթաթոշակներ հետևյալ դրամաչափերով.

- Խաչատուր Աբովյանի անվան կրթաթոշակ՝ 40 000 դրամ (բոլոր ֆակուլտետներում),
- Մեսրոպ Մաշտոցի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Բանասիրական ֆակուլտետ),
- Գրիգոր Նարեկացու անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Բանասիրական ֆակուլտետ),
- Հրանտ Մաթևոսյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Բանասիրական ֆակուլտետ),
- Ա.Ս. Պուշկինի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Բանասիրական ֆակուլտետ),
- Ա. Գրիբոյեդովի անվան կրթաթոշակ՝ 30 000դրամ (Բանասիրական ֆակուլտետ),
- Մովսես Խորենացու անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Պատմության և իրավ. ֆակուլտետ),
- Մ. Մազմանյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Հոգեբ. և սոց. մանկ. ֆակուլտետ),
- Գուրգեն Էդիլյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Ն/դ, սկզբն. և հատուկ կրթ. ֆակուլ.),
- Անանիա Շիրակացու անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Մաթեմ. և ինֆորմ. ֆակուլտետ),
- Ս. Մերգելյանի անվան կրթաթոշակ՝ 30 000դրամ (Մաթեմ. և ինֆորմ. ֆակուլտետ),
- Ղ. Ալիշանի անվան կրթաթոշակ՝ 30 000դրամ (Կենս., քիմ. և աշխարհ. ֆակուլտետ),
- Լևոն Օրբելու անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կենս., քիմ. և աշխարհ. ֆակուլտետ),
- Ն.Ս. Ենիկոլոպյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կենս., քիմ. և աշխարհ. ֆակուլտետ),
- Վ. Համբարձումյանի անվան կրթաթոշակ՝ 30 000դրամ (Ֆիզիկատեխ. ֆակուլտետ),
- Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Օտար լեզուների ֆակուլտետ),
- Ջորջ Բայրոնի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Օտար լեզուների ֆակուլտետ),
- Մարտիրոս Սարյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Գեղարվեստի ֆակուլտետ),
- Սիրարփի Տեր-Ներսեսյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Գեղարվեստի ֆակուլտետ)
- Մովսես Գորգիսյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կուլտուրայի ֆակուլտետ),
- Ա. Յավուրյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կուլտուրայի ֆակուլտետ),
- Ֆրունզե Դովլաթյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կուլտուրայի ֆակուլտետ),
- Հենրիկ Մալյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կուլտուրայի ֆակուլտետ),
- Արամ Խաչատրյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կուլտուրայի ֆակուլտետ),
- Առնո Բաբաջանյանի անվան կրթաթոշակ՝ 30 000 դրամ (Կուլտուրայի ֆակուլտետ):

3.2. Անհատական կրթաթոշակներ կարող են տրամադրվել նաև բարեգործական հիմնադրամների, ստեղծագործական միությունների, անհատ ձեռներեցների կողմից:

3.3. Անվանական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակ: